ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/46

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ վիճակագրական կոմիտե
Մասնակից՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատու՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչներ՝ Վ. Ղազարյանի, Ա. Մարտիրոսյանի,
«Կոմպմարկետ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Ջուլհակյանի, ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2» ծածկագրերով գնանշման հարցում, համակարգչային սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարության կողմից 12.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1897-2020 գրությամբ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ վիճակագրական կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.02.2020թ.-ի թիվ Ե/210-20 գրության հիման վրա, 12.02.2020թ.-ին «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 12.02.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ:

20.02.2020թ.-ին և 27.02.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.03.2020թ.-ին:

2. **<u>ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.**

ՀՀ վիճակագրական կոմիտեն 11.02.2020թ.-ի թիվ Ե/210-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Վիճակագրական կոմիտեի կողմից համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 2019 թվականի դեկտեմբերի 27-ին հայտարարվել է ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2 ծածկագրով գնանշման հարցում: Ընթացակարգի շրջանակում 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ն, որի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին ներկայացվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից ներկայացված բնութագիրը չի համապատասխանել հրավերով

սահմանված տեխնիկական բնութագրին: 2020 թվականի հունվարի 31-ին, սահմանված կարգով, մասնակցին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները: <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը շտկելու փոխարեն ներկայացվել է պարզաբանում, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել: <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի հայտը մերժվել է, ինչը հանգեցրել է գնման գործընթացին մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն ներկայացրել է պարզաբանում հայտնելով հետևյալը.

<<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ <<Գնումների աջակցման կենտրոն>> ՍՊԸ-ի տնօրեն Ա Պարանյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված ՍՑ-ԼՕ-2020/45 ընթացակարգի հիմքերի մասին ներկայացված դիրքորոշման վերաբերյալ Վիճակագրական կոմիտեն ներկայացնում է դիրքորոշում:

ա) Տեղեկացնում եմ, որ, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի , ինչպես նաև ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2 ծածկագրով ընթացակարգի հրավերի 7.18 կետի, <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով, գնահատող հանձնաժողովի 31.01.2020թ. թիվ 3 արձանագրության հետ միաժամանակ, նույն ծանուցմամբ, քարտուղարը ներկայացրել է բնութագրի շտկման առաջարկ (կից ներկայացվում է Armeps համակարգից արտատպված էջը): Առաջարկում հստակ նշված են եղել ուղղման ժամկետը և տարբերակը (երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները՝ viktoria@armstat.am էլ. փոստին ուղարկելով շտկված նկարագիրը): Քանի որ մասնակիցը հաստատել է, որ ստացել է համակարգով ուղարկված թիվ 3 արձանագրությունը, բնականաբար ծանուցումը չէր կարող ստացվել մասնակի, ուրեմն եթե <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ն ստացել է 31.01.2020թ. թիվ 3 արձանագրությունը, ուրեմն նրա կողմից ստացվել է նաև շտկման առաջարկը, ինչը նշանակում է, որ <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ն ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է

ծանուցում՝ ներկայացված գնման առարկայի բնութագրի շտկման առաջարկ: Սակայն, ինչպես արձանագրվել է ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.02.2020թ. թիվ 4 արձանագրությամբ, <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ն չի ներկայացրել շտկում, փոխարենը ներկայացրել է պարզաբանում, որը ևս քննարկվել է գնահատող հանձնաժողովի կողմից:

*բ) 1. Հրավերով պահանջվել է, որ տպիչի տպագրության որակը պետք է պակաս չլինի 1200*1200 դիփիայից: <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է մինչև 1200*1200 դիփիայ, հրավերով սահմանված 1200*1200 դիփիայը ներառվում է <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի ներկայացված բնութագրում, սակայն մինչև բառը նշանակում է, որ տպիչը կարող է ապահովել ինչպես 1200*1200 դիփիայ, այնպես էլ օրինակ 800*800 կամ ցանկացած այլ 1200*1200-ից ցածր տպագրության որակ, ինչը նշանակում է որ տվյալ մասով <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ն կարող էր շտկել անհամապատասխանությունը, պարզապես հանելով <<մինչև>> բառը: Նշվածը արձանագրվել է նաև ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.02.2020թ. թիվ 4 արձանագրությամբ:*

2. Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է տպիչի Թղթերի դարակների քանակը՝ 2 հատ, յուրաքանչյուրը 250 էջ տարողությամբ, սակայն <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է թղթերի դարակների քանակը՝ 2-ի փոխարեն 3 հատ, որից երկուսը նախատեսված են մուտքի համար՝ 100 և 250 թերթ տարողությամբ, իսկ երրորդը նախատեսված է ելքի համար՝ 250 թերթ տարողությամբ: Քանի որ բոլոր տպիչ սարքերը համալրված են լինում թղթի ելքի դարակով (պնակով, անգլ.՝ bin) և տպագրվող թուղթը դուրս է գալիս տպիչից /ինչը նկարագրելու անհրաժեշտություն չկա/ , ուստի ի սկզբանե պարզ է, որ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը վերաբերել է միայն մուտքի դարակներին (անգլ.՝tray) քանակը՝ 2 հատ, 250 թերթ տարողությամբ, ինչն էլ արձանագրվել է ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.02.2020թ. թիվ 4 արձանագրությամբ:

3. Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ: Մասնակիցը ընթացակարգին հայտ ներկայացնելիս պետք է հիմք ընդունի տվյալ ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը և ոչ թե որևէ ապրանք արտադրողի պաշտոնական կայքում նշված նկարագիրը, քանի որ բնութագրի պահանջներին կարող են բավարարել տարբեր արտադրողների արտադրանքներ, և, հիմք

ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները, հրավերը չի պարունակել պահանջ կամ հղում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը:

Միաժամանակ հարկ է նշել, որ, եթե հիմք ընդունենք <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի մեկնաբանությունը թարգմանության վերաբերյալ, ապա հրավերում պետք է նշվեր լրացուցիչ ԱԴԷՖ՝ 100 թերթ և ոչ թե ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ, ինչը սահմանում է ԱԴԷՖ-ի պարտադիր առկայություն:»:

3. <u>«Կոմպմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.02.2020թ.-ին գրությամբ դիմել է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1897-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«ՀՀ վիճակագրական կոմիտեի կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2020թ. տեղի ունեցած նիստի համաձայն՝ 2 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2 կետի համաձայն՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բնութագրում արձանագրվել է անհամապատասխանություն, այն է՝

*- Տպագրության որակը պահանջվել է ոչ պակաս 1200*1200 դիփիայից, ներկայացվել է մինչև 1200*1200 դիփիայ.*

- Թղթերի դարակների քանակը պահանջվել է 2 հատ, յուրաքանչյուրը 250էջ տարողությամբ /պահանջը սահմանվել է մուտքի դարակների համար/, ներկայացվել է 3 հատ, որից երկուսը նախատեսված են մուտքի համար՝ 100 և 250 թերթ տարողությամբ, իսկ երրորդը նախատեսված է ելքի համար՝ 250 թերթ տարողությամբ.

- Պահանջվել է, որ տպիչը պետք է ունենա ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ, սակայն առաջարկված բնութագրում նշված է, որ տպիչն ունի ԱԴՖ ավելացնելու հնարավորություն, ձեռք է բերվում լրացուցիչ, նախատեսված է 100 թերթի համար:

Հանձնաժողովը որոշեց հրավերով սահմանված կարգով կասեցնել նիիստը և «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1 կետի համաձայն՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված բնութագիրը, սակայն «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից 31.01.2020թ. գրությամբ ներկայացվել է պարզաբանում հանձնաժողովի կողմից կատարված դիտողությունների վերաբերյալ:

Նույն արձանագրության 2-րդ կետով գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը ընդունելի չէ և որոշեց մերժել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է այն հիմքով, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված բնութագիրը, իսկ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից 31.01.2020թ. գրությամբ ներկայացված պարզաբանումը՝ հանձնաժողովի կողմից ընդունելի չի գնահատվել:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Նախ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է

կայացրել ծանուցել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին 3-օրյա ժամկետում հանձնաժողովին ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունները շտկված նկարագիրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն այդպես էլ չի ստացել արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկում կատարելու ծանուցումը, այլ փոխարենը ստացել է միայն թիվ 3 արձանագրությունը: Նշված արձանագրությունը նույն օրը էլեկտրոնային եղանակով ուղարկվել է armeps ոչ ավտոմատ ծանուցման տեսքով, սակայն առանձին ծանուցում «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին չի ուղարկվել:

Այնուհետև «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն ծանոթանալով ուղարկված արձանագրության հետ 31.01.2020թ. ուղարկել է շտկում՝ պարզաբանման տեսքով, սակայն՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը ընդունելի չէ և որոշել է մերժել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի հայտը:

Իսկ ինչպես արդեն նշել ենք, Հրավերի 7.18 կետի համաձայն՝ .... առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքի ամբողջական նկարագիրը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը....

-ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև հանձնաժողովի նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Փաստացիորեն նշված փաստերը վկայում են, որ Ընկերությանը շտկման ծանուցում չի ուղարկվել: Այսինքն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, որ այս պարագայում, երբ շտկման ծանուցում չի ուղարկել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին /այսինքն՝ չնշելով շտկված փաստաթղթեր ներկայացնելու վերջնաժամկետ և էլ. հասցե՝ թե շտկված փաստաթղթերը որ էլ. հասցեին պետք է ուղարկվի/ և հաշվի առնելով որ 31.01.2020թ. «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերով նախատեսված քարտուղարի էլ. հասցեին է ուղարկվել շտկումը, դրանից հետո գնահատող հանձնաժողովը որոշել է, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի վարույթներում արդեն իսկ քննվել են նույնաբովանդակ գործեր՝ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/14, ՍՅ-ԼՕ-2019/221, թիվ ՍՅ-ԼՕ-2019/220 և այլն:

Օրինակ, 12.12.2019թ. կայացրած թիվ ՍՑ-ԼՕ-2019/220 որոշմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանը արձանագրել է հետևյալը. «Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցում ուղարկելու միջոցով արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումն էլեկտրոնային եղանակով չի ուղարկվել «Նամենասեդ» ՍՊԸ-ին, այլ միայն ուղարկվել է անձանագրության պատճեն: Արձանագրության ուսումնասիրությունից պարզվել է, որ հանձնաժողովի կողմից չի նշվել, թե արձանագրված անհամապատասխանությունը քանի օրվա ընթացքում պետք է շտկել և որ էլեկտրոնային փոստի հասցեին է պետք այն ուղարկել»:

Եվ վերջապես՝ գնումների հետ կապված բողոնքեր քննող անձին խնդրում ենք քննարկել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների իրավաչափության հարցը, մասնավորապես արձանագրվել է՝

*Տպագրության որակը պահանջվել է ոչ պակաս 1200*1200 դիփիայից, ներկայացվել է մինչև 1200*1200 դիփիայ.*

Թղթերի դարակների քանակը պահանջվել է 2 հատ, յուրաքանչյուրը 250 էջ տարողությամբ /պահանջը սահմանվել է մուտքի դարակների համար/, ներկայացվել է 3 հատ, որից երկուսը նախատեսված են մուտքի համար՝ 100 և 250 թերթ տարողությամբ, իսկ երրորդը նախատեսված է ելքի համար՝ 250 թերթ տարողությամբ.

Պահանջվել է, որ տպիչը պետք է ունենա ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ, սակայն առաջարկված բնութագրում նշված է, որ տպիչն ունի ԱԴՖ ավելացնելու հնարավորություն, ձեռք է բերվում լրացուցիչ, նախատեսված է 100 թերթի համար:

Վերը նշված 3 կետերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

*Հրավերով պահանջվել է որ տպագրության որակը ոչ պակաս 1200*1200 դիփիայից: «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է մինչև 1200*1200 դիփիայ, այսինքն՝ Հրավերով սահմանված 1200*1200 դիփիայ ներառվում է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նկարագրում:*

Հրավերի տեխնիկական-բնութագրով սահմանվել է հետևյալը՝ <<Թղթերի դարակների քանակը՝ 2 հատ, յուրաքանչյուրը 250 էջ տարողությամբ>>, ինչն էլ իր հերթին ներկայացրել է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից, այնինչ գնահատող հանձնաժողովը դուրս է

եկել Հրավերի տեխնիկական-բնութագրի պահանջներից և արձանագրել է, որ պահանջը սահմանվել է մուտքի դարակների համար:

Հրավերի տեխնիկական-բնութագրով սահմանվել է հետևյալը՝ <<ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ>>, ինչն էլ իր հերթին ներկայացրել է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից, այնինչ գնահատող հանձնաժողովը նորից դուրս է եկել Հրավերի տեխնիկական-բնութագրի պահանջներից և արձանագրել է, որ …

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել "Գնումների մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի "ա" ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության որևէ խախտում, ուստի և առկա չեն «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:»:

Մասնակիցը 02.03.2020թ.-ի և 06.03.2020թ.-ի ներկայացրած լրացումներով հայտնել է նաև հետևյալը.

««Կոմպմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՅ-ԼՕ-2020/45 ընթացակարգի շրջանակներում 27/02/2020 թվականին կայացված նիստի տեսագրությունը մի քանի անգամ դիտելուց հետո հարկ եմ համարում ևս մեկ անգամ դիմել Ձեզ հետևյալ խնդրանքով:

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն համակարգչային տեխնիկայի հայկական շուկայում աշխատում է 2001 թվականից և մշտապես աչքի է ընկել որպես օրինապահ հարկատու: Սկսած 2014 թվականից «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն մշտապես մասնակցել է պետական գնումների մրցույթներին և մրցույթների արդյունքում հաճախ ճանաչվել է ընթացակարգի ընտրված մասնակից: Նշված ժամանակահատվածում պատշաճ կերպով իրականացրել է ընթացակարգերի արդյքունքում կնքված հարյուրավոր պայմանագրերով ստանձնած պայմանագրային պարտավորությունները: Վերջին մի քանի տարում «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի շրջանառության 70 տոկոսից ավելին ձևավորվում է պետական գնումների մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի արդյունքում:

Եվս մեկ անգամ հավաստիացնում եմ Ձեզ, որ «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2» ծածկագրով հրավերի շրջանակներում 2-րդ չափաբաժնով պահանջվող բազմաֆունկցիոնալ տպող սարքի հրավերում առկա տեխնիկական բնութագրրին համապատասխան մենք

հասկացել և գնային առաջարկ ենք ներկայացրել այն բազմաֆունկցիոնալ սարքի համար, որը ներկայացրել ենք հայտի շրջանակներում պահանջվող տեխնիկական բնութագրերով: Ներկայացված տեխնիկական բնութագրերը անբողջությամբ արտահայտում են այն սարքի բնութագրերը, որը նշվել է մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերի ձևում (հավելված 3,1): Եթե մենք մեր գնային առաջարկը պատրաստելիս և հետևաբար նաև տեխնիկական բնութագրեր ներկայացնելիս հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրերը այնպես չենք հասկացել, ինչպես որ ցանկացել է ներկայացնել պատվիրատուն, ապա դրանում մեղքի որոշակի բաժին ունի նաև պատվիրատուն:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ մեկ անգամ ևս խնդրում եմ ՍՅ-ԼՕ-2020/45 ընթացակարգի արդյունքում չկայացնել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում:

««ՍՅ-ԼՕ-2020/45 ընթացակարգի հիմքերի քննության վերաբերյալ 27/02/2020թ հրավիրված նիստին՝ Պատվիրատուի կողմից ներկա էին գնման ընթացակարգի քարտուղարը և գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը: Քննարկվող հարցի վերաբերյալ գնման ընթացակարգի քարտուղարի կողմից արտահայտված կարծիքները ձեռք բերվելիք սարքի հրավերում առկա պահանջների վերաբերյալ մասնագիտորեն հիմնավորված չէին, որի վերաբերյալ նիստի ընթացքում մենք արտահայտել ենք մեր կարծիքը:

Այսպես, ըստ գնման ընթացակարգի քարտուղարի, հրավերում սահմանված են գնման առարկայի նկատմամբ տեսական պահանջներ, այնինչ՝ գնման նպատակով ընթացարգ հայտարարելու փուլում գնման առարկայի նկատմամբ սահմանված պահանջները չեն կարող լինել տեսական և դրանք պետք է սահմանված լինեն այնպես, որ պահանջվող բնութագրերին համապատասխան գոնե մեկ ապրանք գոյություն ունենա: Ակնհայտ է, որ հրավերում շարադրված տեխնիկական բնութագրերը սահմանելիս պատվիրատուն նկատի է ունեցել հենց այն դասի բազմաֆունկցիոնալ տպող սարքերը, որոնցից մեկը առաջարկվել է մեր կողմից: Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի դիրքորոշումից ակնհայտ են դառնում, որ նա ընդունում է, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սարքի տպման որակին և թղթի պահանջվող դարակների քանակին վերաբերվող գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները հրավերով պահանջվող սարքի տեխնիկական բնութագրերի նկատմամբ համոզիչ չեն և «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող

սարքի բնութագրերը այդ մասով չեն հակասում պահանջվող տեխնիկական բնութագրերին: Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը նշում է նաև, որ ընթացակարգի հրավերում պահանջվող սարքի տեխնիկական բնութագրերում թվարկված են միայն սարքի պահանջվող բնութագրերը, իսկ ընդհանուր բնութագրերը բացակայում են և հատուկ նշում, որ հրավերում փաստաթղթերի ավտոմատ փոխանցման սարքի վերաբերյալ «ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ» շարադրանքը նշանակում է նաև այդ բաղադրամասի առկայություն: Նիստի ժամանակ և նաև մեր կողմից անհամապատասխանություններին վերաբերվող առարկությունների և դիրքորոշման մեջ մենք նշել ենք, որ տվյալ գրառումը մեր կողմից հասկացվել է որպես փաստաթղթերի ավտոմատ փոխանցման բաղադրամասի հատկություն, որն իսկապես ունի մեր կոմից առաջարկվող բազմաֆունկցիոնալ տպող սարքի համար արտադրողի կողմից նախատեսված բաղադրամասը: Մեր առարկությունների և դիրքորոշման մեջ մենք նշել են, որ հրավերում առկա «ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ» պահանջը վերցված է սարքի վերաբերյալ արտադրողի կայքում (https://www8.hp.com/ru/ru/printers/product-details/product-specifications/17746771) առկա «Емкость автоматического устройства подачи документов Дополнительно, 100 листов» նկարագրությունից և չի հասկացվել որպես սարքի առկայություն: Հայտով մեր կողմից առաջարկվող սարքն ունի բազային կառուցվածք և նաև լրացուցիչ ձեռք բերվող բաղադրամասերի, այդ թվում նաև փաստաթղթերի ավտոմատ փոխանցման սարքի լրացուցիչ ձեռք բերելու հնարավորություն: Ինչպես նշվել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանություններին վերաբերվող 31/01/2020թ մեր կողմից ներկայացված առարկությունների մեջ, նույն արտադրողն ունի նաև M436nda մոդելի նույն դասի բազմաֆունկցիոնալ տպող սարք, որի բազային կառուցվածքում ի սկզբանե նախատեսված է փաստաթղթերի ավտոմատ փոխանցման բաղադրամասը: Այդ հատկությունը արտադրողի կողմից վերջինին վերաբերվող նկարագրության մեջ (https://www8.hp.com/ru/ru/printers/product-details/product-specifications/11596636) ունի հետևյալ շարադրանքը՝ «Емкость автоматического устройства подачи документов Стандартно, 100 листов»: Հետևաբար, եթե պատվիրատուն հրավերում նկատի է ունեցել, որ գնման ենթակա բազմաֆունկցիոնալ տպող սարքը պետք է ունենա փաստաթղթերի ավտոմատ փոխանցման բաղադրամաս, ապա նրա նկատմամբ պահանջը պետք է առնվազն ունենար այդ բաղադրամասի վերաբերյալ արտադրողի կողմից առաջարկված շարադրանքը:

Լիահույս եմ, որ վերը շարադրվածը հաշվի կառնվի «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Ձեր կողմից վերջնական որոշման կայացնելու համար:

Ինչ վերաբերվում է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ձեր հնարավոր որոշմանը, ապա դա մեզ համար հավասարազոր կլինի մեր տնտեսական գործունեությունը շարունակելու անհնարինության, քանի որ այդ դեպքում էապես կնվազեն մեր շրջանառության ծավալները և մենք հնարավորություն չենք ունենա կատարելու մեր աշխատակիցների և գործընկերների նկատմամբ ընձեռնած պարտավորությունները:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Բողոքներ քննող անձին խնդրել են «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2020/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 27.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրի համաձայն՝ 2-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագրերը՝

Տպիչ բազմաֆունկցիոնալ՝

Գործառույթները՝ տպիչ, պատճեն, սկաներ,

Սև-սպիտակ տպման արագությունը՝ A4-23 էջ/րոպեում, A3-նվազագույնը 12 էջ/րոպեում,

Առաջին էջի տպման արագությունը՝ 8.8 վ,

Երկկողմանի ավտոմատ տպագրության հնարավորությամբ,

Տպելու ծավալ (ամսական, ձեւաչափը Ա4)՝ մինչև 50000 էջ,

Տպագրմանն տեխնոլոգիան՝ լազերային,

Տպագրության որակը՝ ոչ պակաս 1200 x 1200 դիփիայ,

Պատճենահանման որակը՝ 600 x 600 դիփիայ,

Սկանավորման որակը՝ 600 x 600 դիփիայ,

Պրոցեսորի արագությունը՝ նվազագույնը 600 ՄՀց,

Հիշողության նվազագույն ծավալը՝ ստանդարտ 128 ՄԲ,

Թղթերի դարակների քանակը՝ 2 հատ, յուրաքանչյուրը 250 էջ տարողությամբ,

Թղթի ձևաչափը՝ Ա3, Ա4, Ա5, Բ4, Բ5, 8 Կա, 16 Կա,

ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ,

Ներկառուցված ցանցային ինտերֆեյս՝ 10/100 բեյս Թիէքս,

Սկաների արագությունը՝ 30 էջ/րոպեում (ԱԴՖ հնարավորությամբ):

Օրիգինալ քարթրիջը պետք է ներառված լինի գործարանային կոմպլեկտի մեջ 4000 էջի տպագրման հնարավորությամբ: Անհրաժեշտ բոլոր մալուխները պետք է ներառված լինեն գործարանային կոմպլեկտի մեջ (այդ թվում ՅՈՒԷՍԲԻ ինտերֆեյս/USB interface/ մալուխ): Երաշխիքը նվազագույնը 1 տարի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ.

1. բավարարում է «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին,

2. «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու

դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Մասնակիցը թիվ 3.1 հավելվածով ներկայացրել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (այսուհետ նաև՝ Նկարագիր):

Նկարագրով, Մասնակիցը որպես 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի բնութագրեր առաջարկել է հետևյալը.

- տպագրության որակը մինչև 1200*1200 դիփիայ,

- թղթերի դարակների քանակը 3 հատ, որից երկուսը նախատեսված են մուտքի համար՝ 100 և 250 թերթ տարողությամբ, իսկ երրորդը նախատեսված է ելքի համար՝ 250 թերթ տարողությամբ,

- ունի ԱԴՖ (ADF) ավելացնելու հնարավորություն, ձեռք է բերվում լրացուցիչ, նախատեսված է 100 թերթի համար:

Հանձնաժողովի 31.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ, այն է՝

- տպագրության որակը պահանջվել է ոչ պակաս 1200*1200 դիփիայից, սակայն ներկայացվել է մինչև 1200*1200 դիփիայ,

- թղթերի դարակների քանակը պահանջվել է 2 հատ, յուրաքանչյուրը 250 էջ տարողությամբ /պահանջը սահմանվել է մուտքի դարակների համար/, ներկայացվել է 3 հատ, որից երկուսը նախատեսված են մուտքի համար՝ 100 և 250 թերթ տարողությամբ, իսկ երրորդը նախատեսված է ելքի համար՝ 250 թերթ տարողությամբ,

- պահանջվել է, որ տպիչը պետք է ունենա ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ, սակայն առաջարկված բնութագրում նշված է, որ տպիչն ունի ԱԴՖ ավելացնելու հնարավորություն, ձեռք է բերվում լրացուցիչ, նախատեսված է 100 թերթի համար:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարը 31.01.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի info@comp.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է թիվ 3 արձանագրությունը և ծանուցել է Մասնակցին այն մասին, որ «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի նկարագրի և հրավերով սահմանված բնութագրի միջև, ինչով պայմանավորված Մասնակցին առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և շտկված տարբերակը ուղարկել viktoria@armstat.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Ի պատասխան վերոնշյալ ծանուցման, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից 31.01.2020թ.-ին Պատվիրատուին գրությամբ ներկայացվել է պարզաբանում, առաջարկված անհամապատասխանությունները շտկելու փոխարեն:

Հանձնաժողովի 05.02.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը ընդունելի չէ, և մերժել է վերջինիս հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1897-2020 գրությամբ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ապրանքների գնման դեպքում ներկայացնի՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի

հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապա-տասխանությունը: Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 27.12.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրի համաձայն՝ 2-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագրերը, մասնավորապես՝

Տպիչ բազմաֆունկցիոնալ…

Տպագրության որակը՝ ոչ պակաս 1200 x 1200 դիփիայ,

Թղթերի դարակների քանակը՝ 2 հատ, յուրաքանչյուրը 250 էջ տարողությամբ,

ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ…:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած նաև «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովի 21.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Մասնակիցը թիվ 3.1 հավելվածով ներկայացրել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և որպես 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի բնութագրեր առաջարկել է հետևյալը.

- տպագրության որակը մինչև 1200*1200 դիփիայ,

- թղթերի դարակների քանակը 3 հատ, որից երկուսը նախատեսված են մուտքի համար՝ 100 և 250 թերթ տարողությամբ, իսկ երրորդը նախատեսված է ելքի համար՝ 250 թերթ տարողությամբ,

- ունի ԱԴՖ (ADF) ավելացնելու հնարավորություն, ձեռք է բերվում լրացուցիչ, նախատեսված է 100 թերթի համար:

Հանձնաժողովի 31.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ, այն է՝

- տպագրության որակը պահանջվել է ոչ պակաս 1200*1200 դիփիայից, սակայն ներկայացվել է մինչև 1200*1200 դիփիայ,

- թղթերի դարակների քանակը պահանջվել է 2 հատ, յուրաքանչյուրը 250 էջ տարողությամբ /պահանջը սահմանվել է մուտքի դարակների համար/, ներկայացվել է 3 հատ, որից երկուսը նախատեսված են մուտքի համար՝ 100 և 250 թերթ տարողությամբ, իսկ երրորդը նախատեսված է ելքի համար՝ 250 թերթ տարողությամբ,

- պահանջվել է, որ տպիչը պետք է ունենա ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ, սակայն առաջարկված բնութագրում նշված է, որ տպիչն ունի ԱԴՖ ավելացնելու հնարավորություն, ձեռք է բերվում լրացուցիչ, նախատեսված է 100 թերթի համար:

Հանձնաժողովի քարտուղարը 31.01.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի info@comp.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է թիվ 3 արձանագրությունը և ծանուցել է Մասնակցին այն մասին, որ «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի նկարագրի և հրավերով սահմանված բնութագրի միջև, ինչով պայմանավորված Մասնակցին առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և շտկված տարբերակը ուղարկել viktoria@armstat.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Ի պատասխան վերոնշյալ ծանուցման, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից 31.01.2020թ.-ին Պատվիրատուին գրությամբ ներկայացվել է պարզաբանում, առաջարկված անհամապատասխանությունները շտկելու փոխարեն:

Հանձնաժողովի 05.02.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը ընդունելի չէ, և մերժել է վերջինիս հատը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով ձեռքբերվող ապրանքի տպագրության որակը պետք է լինի՝ ոչ պակաս 1200*1200 դիփիայ, թղթերի դարակների քանակը՝ 2 հատ, յուրաքանչյուրը 250 էջ տարողությամբ, պետք է ունենա ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ:

Մասնակիցը թիվ 3.1 հավելվածով ներկայացրել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, առաջարկելով տպագրության որակը՝ մինչև 1200*1200 դիփիայ, թղթերի դարակների քանակը 3 հատ, որից երկուսը նախատեսված են մուտքի համար՝ 100 և 250 թերթ տարողությամբ, իսկ երրորդը նախատեսված է ելքի համար՝ 250 թերթ տարողությամբ, ապրանքը նաև ունի ԱԴՖ (ADF) ավելացնելու հնարավորություն, ինչը ձեռք է բերվում լրացուցիչ, նախատեսված է 100 թերթի համար:

Հաշվի առնելով ընթացակարգի հրավերով սահմանված և Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերի միջև առկա վերոնշյալ անհամապատասխանությունները, Հանձնաժողովը «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին առաջարկել է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սակայն Մասնակիցի կողմից ներկայացվել է պարզաբանում, ինչը ընդունելի չի եղել Հանձնաժողովի կողմից, ինչով պայմանավորված վերջինիս հայտը մերժվել է:

Սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա *«տպագրության որակը՝ մինչև 1200*1200 դիփիայ»* բնութագիրը չի համապատասխանում հրավերով պահանջված՝ *«տպագրության որակը ոչ պակաս 1200*1200 դիփիայից»* բնութագրին, *«թղթերի դարակների քանակը 3 հատ, որից երկուսը նախատեսված են մուտքի համար՝ 100 և 250 թերթ տարողությամբ, իսկ երրորդը նախատեսված է ելքի համար՝ 250 թերթ տարողությամբ»* բնութագիրը չի համապատասխանում հրավերով պահանջված՝ *«թղթերի դարակների քանակը՝ 2 հատ, յուրաքանչյուրը 250 էջ տարողությամբ»* բնութագրին և *«ապրանքը նաև ունի ԱԴՖ (ADF)*

ավելացնելու հնարավորություն, ինչը ձեռք է բերվում լրացուցիչ» բնութագիրը չի համապատասխանում հրավերով պահանջված՝ *«ապրանքը պետք է ունենա ԱԴԷՖ՝ լրացուցիչ 100 թերթ»* բնութագրին:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձն ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև օրենսդիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսի, որ հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը:

Վերոգրյալների հաշվառմամբ, ինչպես նաև հաշվի առնելով Հանձնաժողովի քարտուղարի կողմից 31.01.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի info@comp.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցումը (արձանագրությունը և արձանագրության ուղեկցական գրության բովանդակությունը), Բողոքներ քնող անձը հաստատված է համարում, որ Մասնակիցն իրազեկվել է և հնարավորություն է ունեցել իրապես պարզելու ծանուցմամբ պարունակվող հանգամանքը (ները), որն էլ ապացուցվում է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից 31.01.2020թ.-ին Պատվիրատուին գրությամբ ներկայացված պարզաբանմամբ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն: Եվ եթե հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցն պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված առաջարկվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով համապատասխանության շտկումներ՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1897-2020 գրությամբ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/46 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ